# ԱՎԱՆԳԱՐԴ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1923Թ. ՄԱՅԻՍԻ 5-ԻՑ 18(11079) 20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ՈՒՐԲԱԹ, 1995թ.


## Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԼԻՆԵԼ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

*Վերջին նստաշրջանում Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքը:*

*Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ օրենքը, ի՞նչ իրավունքներ է վերապահում Հայաստանի քաղաքացիներին և ի՞նչ պարտականություններ է դնում նրա առջև. այս հարցերը մեկնաբանել խնդրեցինք ՀՀ ԱԺ իրավական ծառայության ղեկավար, ՌԴ Էկոնոմիկայի, Ֆինանսների և իրավունքի ակադեմիայի իսկական անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու Հենրիկ Խաչատրյանին:*

### «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքը ընդունվեց առաջին ընթերցմամբ

— Քաղաքացիության հիմնահարցը չափազանց կարևոր է, որովհետև պետությունն ունի իր ատրիբուտները, որոնցից մեկը քաղաքացիությունն է: Չի կարող լինել պետություն առանց քաղաքացիության. խոսքն, իհարկե, ինքնիշխան պետության մասին է: Քաղաքացիության մասին օրենքի նախագիծը բավական երկար ճանապարհ է անցել. եղել են մի քանի նախագծեր, քննարկումներ: Այդ նախագծերում, ինչպես ասում են ջրբաժան գիծ է եղել երկքաղաքացիությունը (բիպատրիզմը):

Առաջին ընթերցմամբ ընդունված այս օրենքը ծավալով մեծ չէ. բաղկացած է 32 հոդվածներից, որոնք ներառում են քաղաքացիության հետ կապված բոլոր հիմնահարցերի, խնդիրների լուծումները:

*— Ի՞նչ ասել է քաղաքացիություն. նախկինում էլ մենք ունեցել ենք քաղաքացիություն և օրենք դրա մասին:*

— Այո; գործում էր Խորհմիության «Քաղաքացիության մասին» օրենքը, որը վերջին անգամ թարմացվեց 1991թ.: «Քաղաքացիության մասին» օրենքի խնդիրն է նախ, սահմանել, թե ինչ է քաղաքացիությունը, ինչ սկզբունքներ են դրվում դրա հիմքում, ինչ կարգավիճակ ունեն քաղաքացիություն չունեցող անձինք (ապատրիդները) և ինչ տարբերություն կա նրանց և քաղաքացիների միջև, ինչպես է ձեռք բերվում կամ դադարեցվում քաղաքացիությունը և այլն: Հիմնականում երկու խոշոր հարցեր են օրենքի հիմքում քաղաքացիության ձեռքբերումը և դադարեցումը: Այնուհետև, ՀՀ-ում ո՞վ իրավունք ունի լուծել քաղաքացիության հետ կապված հարցեր. օրենքի 5-րդ գլուխը նվիրված է հենց այս հիմնահարցին:

Ասեմ, որ առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի առաջին հոդվածը

(Վերջը 2-րդ էջում)



Լուսանկարը՝ Հովհ. ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ

## ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է



Հայաստանն այսօր ապրում է բուռն փոփոխությունների ժամանակաշրջան: Փոփոխություններ, որոնք բնական ազդեցություններ ունեն բոլոր խավերի, և դրանցից ամենաընդգրկունի՝ երիտասարդության վրա: Ինձ թվում է, հասել է այն պահը, երբ երիտասարդությանն անհրաժեշտ է ուշադրություն և հոգատարություն բարձր մա-

### Անհրաժեշտ անդրադառնալ կառույցներին

կարդակով, այսինքն պետական քաղաքականություն...

## ՀԱՅՐԵՆ...

Նախորդ շաբ... ներքաղաքական... իրավամբ կարե... գային ժողովի ... նի Հանրապետու... թյան մասին» ... քննարկումը և այ... սամյա վաղեմու... յուն ունեցող փո... փաթուղթը երկ... դեգերումներից... կը վերսկին օր... այն տեսանկյունի... թյան տարբեր խ... հակասական ... դրսևորել այս խն... նախկինում և թե ... նչել նաև, որ նա... նին հարուկ էմո... այս անգամ բայ... ցավոք, դեռևս չի... նախագծի առավե... Մեկ անգամ և... կաթողով սահմա... րի և պարտականո... նկատենք միայն, ...

## ՊԱՏՄՈՒԹ...

*Այսօր մեր ...*
*ռուսական հա...*
*փոխարկիչիդնե...*
*Մեր հարցադրու...*
*կա իրավիճակի...*
*միջև հարաբերո...*
*նանկարների մ...*

— Կազմակերպու...

...յուրովին նոր բնագավառներ,
...աքերություններ, բայց երի-
... մարդը պետականությա-
... գործընթացում անպայման
... զգա իր կարևորությունը, իր
...ռինելի դերը հասարակութ-
...նցում: Նա պետք է սպասա-
...կություն, որպեսզի դրսևորի
...ությունները: Եվ հարկ է, որ պե-
... մարմինները զբաղվեն այս
... գործով:
...կության նախարարությունում
...լում է երիտասարդական հար-
...վարչություն: Այստեղ աշխա-
... պետք է փարվի ըստ բնագա-
...ի մասնագիտության, աշխատող
...սարդության և այլոց շրջանն...

...ր դեպքերում կարծիքս այն է,
...իտասարդության հետ աշխա-
... անհրաժեշտ:
...ցենայի, որ «Ավանգարդը» եր-
... ... իր ... 
...րներ կրթելու, դաստիարակելու
... այս անգամ արդեն մեր օրերի
...ինձ թվում է, այս գործում կար-
...աշխատանքը ունի կարևորելու
... աշխատանքային կոլեկտիվը,
...վարդույց ծանաչում եմ և երկար
...ներ համագործակցել ենք: Այն-
...ր, պետական քաղաքականութ-
...րականացման գործում «Ավան-
...ի» հետ ես հույս եմ կապում:
... սնում է ՀՀ նախագահին կից
...սարդական հարցերի խորհր-
...րդն ստեղծվելը այս տարի և հի-
...ի գործում ինչ-ինչ պատճառնե-
...ասեմ, որ իմ կարծիքով, ՀՀ նա-
...ին՝ երիտասարդական հարցերի
... նոր ապարատ ունենալու մասին
...դեռևս ոչինչ հայտնի չէ, բայց
...մ եմ, որ նա այս հրատապ ու
... կարևորությունը չկորցնող հար-
...որհրդատու անպայման պետք է
...ա, որը կկոորդինացնի հրագործ-
...քաղաքականությունը, առաջնայի...
...րների մասին տեղեկատվություն
... նախագահին:

*Գրիգոր ԱՎԱԳՅԱՆ*
*ԱԺ պատգամավոր*

## ...ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ...ՐՁԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ՝ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՌՀԱՎԱՏՉՅԱ

...Օրերս Խնկո-Ապոր անվան ազ-
...յին մանկական գրադարանում
...վել ֆրանսիական գրքի ցուցա-
...դես, որը կազմակերպել էին Հա-
...տանում Ֆրանսիայի Հանրապե-
...ության դեսպանատունը, ՀՀ մշա-
...յթի, երիտասարդության հարցերի
... սպորտի նախարարությունը և
...դարանի կոլեկտիվը:
... Բացման խոսքով հանդես եկավ
...գրադարանի տնօրեն Հ. Դանիելյանը:
...ուհին ... Հայաստանում Ֆրանսիա-
... Հանրապետության դեսպան տի-
... ... ասաց, որ համագոր-
...ակցությունը խորանալու ...
...ի ու, անկասկած, կնպաստի իրա-
... ... ... ... բայց
...մշակույթների ավելի
... ... նախաձեռ-
... է ... Տերյան ... 
... Հրատարակել ...
... ... հայերե-
... ֆրանսերեն և ընդհակառակը:
...Հրատարակությունները Հայաս-
...տանում կիրականացնեն «Արդոնի»,

մանկավարժական գործու-
ժողով նվիրված օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության 80-ամյակին: Ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետի (որի դեկանը մեր կոորդինացիոն խորհրդի անդամ, պրոֆեսոր Լևոն Մկրտչյանն է) ուսանողների հետ միասին եղանք Հոկտեմբերյանում ռուս սահմանապահների մոտ: Տեղի ունեցան հե-

ինչ թվելու կարիք չկա: Ցավոք, իրավիճակը այնպես դասավորվեց, որ ամռան ամիսներին մենք զբաղված էինք այլ գործերով: Հիմա մենք նորից աշխատանքային ակտիվ վիճակում ենք:

— Եվ ինչի՞ց սկսվեց ձեր կարճ պատմության նոր փուլը:

(Վերջը 2-րդ էջում)

# ՆՈՐ ԾՆՈՒՆԴ՝ ԻՐԱՆԱՀԱՅ ԿՅԱՆՔՈՒՄ «ԱՊԱԳԱՅ»


«Ապագայի» առաջին համարը

Ամեն ծնունդ ինքնատիպ է յուրովի և յուրաքանչյուր նորամուտ ողջունելի է, եթե բարուն է հետամուտ: Առավել ևս՝ նոր մամուլի ծնունդը, այն էլ՝ բարդ ու հակասական մեր ժամանակներում: Եվ փառք աստծո, մեր օրերում ծնվում են թերթեր՝ հայապահ ու հայախոս: Ու ոչ միայն Հայաստանում: Դրա ամենաթարմ վկայությունը նորերս Իրանի Իսլամական Հանրապետությունում ծնունդ առած «Ապագայ» պարբերականն է, որի անդրանիկ համարն իսկ լուրջ հայտ է՝ սփյուռքի հայության համախմբելու, հայրենիքի հետ նրանց կապերն ամրապնդելու գործում:

«Ապագայ». արտաքնապես խորը վերլուծություն պետք չէ թերթի անվան իմաստի ծալքերը վերծանելու համար: Առավել ևս, ամենահաճախ գործածվող այն բառերից է, որոնք միայն հույս են ներշնչում և ամրապնդում «գալու եկող» ցալիքի հավատը: Համենայն դեպս, թերթի «Խմբագրականում» նշված է՝ «Հենվելով անցյալին և հայացք նետելով ապագային, ուստի ընտրել ենք «Ապագայ» անվանումը»:

Ես չհասցրի հարցնել՝ թերթի հիմնադիրները երկա՞ր են մտածել՝ այս անունն ընտրելիս, բայց որ ընտրությունը դիպուկ է՝ փաստ է: Թերթի երիտասարդ գլխավոր խմբագրի՝ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ հրճվանքախառն շփոթությունն էլ ընկալելի էր: Եվ նրա հետ մեր զրույցը վերծ էր ամեն տեսակի պայմանականություններից. յոթանասունհինգամյա թերթի խմբագրությունը չէր կարող չհիպարտանալ իրանահայ գործընկերոց ջանքերով ծնունդ առած «Ապագայ»-ով:

(Վերջը 2-րդ էջում)

## ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր, հեռուստալրագրող Արամ Աբրահամյանին և «Ազգ» օրաթերթի հիմնադիր, լրագրող Հակոբ Ասատրյանին հանձնվեցին Թեքեյան մշակութային միության «Վարդգես և Ռիտա Պալյան» հիմնադրամի հայ մամուլի 1995 թվականի մրցանակները՝ հուշատախտակ և 1000-ական ամերիկյան դոլար: Ա. Աբրահամյանն ու Հ. Ասատրյանը Հայաստանում առաջինն արժանացան սույն մրցանակին:

Շնորհավորելով գործընկերներին՝ «Ավանգարդը» նրանց ցանկանում է երկար տարիների լրագրողական բեղուն գործունեություն, մաղթում չընկրկել ընտրած ուղուց:

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է «ԱՎԱՆԳԱՐԴԸ»

Այսուհետ «Լրագիր» օրաթերթը իր ութ էջերից չորսը շաբաթը մեկ անգամ տրամադրելու է երիտասարդությանն ու նրա խնդիրներին: «Ավանգարդը» ողջունում է գործընկերների դրվատելի նախաձեռնությունը:

Բարեկամներ, այս ծով հոգսերի մեջ երիտասարդությունն ամենաշատ տուժողն է: Մենք դա յուրաքանչյուր օր զգում ենք մեր մաշկի վրա: Միասին վեր հանենք մեր հիմնախնդիրներն ու հասցնենք հանրության ուշադրությանը: Դուք ձեր կողմից, մենք՝ մեր: Գուցե մեզ լսո՞ղ լինի:



